

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ ՄՈՆԴՈԼԵՐԵՆ ԲԱՌԱՑԱՆԿԸ

Բանասիր. գիտ. դոկտոր Ռ. Հ. ԲԱՂԲԱՄՅԱՆ

Կիրակոս Գանձակեցին իր «Պատմության» մեջ բերել է մոնղոլերենի մի փոքրիկ բառացանկ. դա մոնղոլերենի համար ամենահին գրավոր հիշատակությունն է, հայերեն-մոնղոլերեն երկլեզվյան առաջին թարգմանական բառացանկը. դա, միևնույն ժամանակ, միջոց է արևելյան միջազգային բառարանից հայերենին անցած որոշ բառերի ակունքները, նրանց անցման ժամանակաշրջանը, գրչագրական աղավաղված ձևերը բացահայտելու համար:

Այդ բառացանկը արդեն կես դար է ինչ դարձել է լեզվաբանական և աղբյուրագիտական քննության առարկա. բառերի հնչյունաբանական քննության հիման վրա մոնղոլագետ ակադ. Բ. Վլադիմիրցովը հայտնաբերեց հնագույն մոնղոլերենի հնչյունական օրինաչափություններից մի քանիսը՝ խուլ և ձայնեղ բաղաձայնների համակարգային փոխանցումը, երկու ձայնավորների միջև գտնված $\gamma \sim \text{г}$ վերացումը, թույլ և ուժեղ բաղաձայնների առկայությունը¹:

Քննելով այդ բառերը ծագումնաբանորեն, ակադ. Հ. Աճառյանը հայտնաբերեց բառերի երկու շերտ՝ մոնղոլական և թյուրք-թաթարական²:

Ոմանք էլ, տարբերություն չդնելով հարազատ և գրչագրական աղավաղ ձևերի միջև և հենվելով վերջիններիս վրա, ընկնում են ծայրահեղությունների մեջ, «հայտնաբերում» այն, ինչը վկայված չէ³:

Սույն հոդվածում մենք ամփոփել ենք հիշյալ բառացանկի գրչագրական տարբերակները, բնութագրել դրանք, լրացրել հեղինակի կողմից գործածված օտարլեզվյան բառերի ցանկը և պարզել, թե ինչ աղբյուրից է օգտվել հեղինակը մոնղոլերեն բառացանկը կազմելիս: Ստորև բերում ենք այդ բառացանկը Գանձակեցու դասավորությամբ և Դ. Դ. Սանժեկի ու Հ. Հ. Աճառյանի գիտական տառադարձությամբ:

Աստված՝ քանգրի. այլ ձեռագրերում՝ քանկրի, քանդրի, քենկրի, քընգրի, քնգրի, քնկրի: Սրանցից ճիշտ կամ մոտավորապես ճիշտ կարող է լինել մեկը կամ երկուսը՝ ներկայացնելով մոնղոլական հնչումը. ձեռագրական տարբերակներից երեքը՝ քընգրի, քնգրի, քնկրի, առանց նախավանկի ա ձայնավորի են և ներկայացնում են քանգրի կամ քանկրի հիմնաձևերը. վերջիններս միմյանցից տարբերվում են գ-կ-ով, որոնք, սակայն, նույն հնչման արևելա- և արևմտահայ տարբերակներն են. սրանք, միանալով քանդրի ձևի

¹ Б. Я. Владимирцов, Сравнительная грамматика монгольского письменного языка и халхаского наречия, Л., 1929, էջ 213:

² Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս II, Երևան, 1953, էջ 259:

³ Հմմտ. «Азербайжан ССР ЕА хәбәрләри ичтиман елмләр серијасы», Баку, 1962, № 1, էջ 91—94: «Структура и история тюркских языков (сборник)», М., 1971, էջ 240—241:

հետ՝ ճշտիվ համապատասխանում են թյուրքական *tanrı* հնչմանը, որը Հ. Աճառյանը տառադարձում է *tanrı*: Առանձին է մնում թևկերի գրչությունը, որը Գ. Սանժեկը տառադարձում է *тәһри*, որը և բուն մոնղոլական բառակն է (սրա համանիշն է *ᠲᠡᠬᠦᠷᠢ* «աստված»): Ինչպես մոնղոլերենում, այնպես էլ թյուրքական լեզուներում այս բառը նշանակում է թե՛ աստված և թե՛ երկինք. այս վերջին նշանակությունը մոնղոլերենում արտահայտվում է նաև *тәһгэр*, *тәһгэри*, իսկ թյուրքական լեզուներում՝ *qoq* բառով:

Մարդ. բնադրում տրված է *лрл*, հարաւ համանիշ բառերով. ձեռագրերում առաջինը գրված է նաև *лр*, երև, իսկ երկրորդը՝ *нрлн* և նույնիսկ՝ *нрлн* երև, իբրև բարդ բառ:

Մոնղոլերենում և համարյա բոլոր թյուրքական լեզուներում այս էր բառը բնահանուր է. Գ. Սանժեկը տառադարձում է *эвэ* (ժամանակակից մոնղոլերենում բառս *эв* ձևով է, որ նշանակում է «տղամարդ, առն. արու, որձ»։ սրա համանիշներն են *эвэгтэй*, *хүн*, *нөхөр*):

Ինչպես երևում է, *лрл*, երև օրինական են և ներկայացնում են էր ձևի տարբերակները. թյուրքական լեզուներում այս բառը *эв*, *ар* ձևերով է:

Հարաւ կամ *нрлн*, հարաւ *лрл* համանիշ ձևերը մոնղոլերենում չկան (Գ. Սանժեկը և Հ. Աճառյանը դրանք չեն տառադարձել). Գիրակոսի «Պատմության» որոշ ձեռագրերում դրանք չեն վերաբերում: Եթե բառասկզբի *н-*ն հավելվածական է, ինչպես այդ հաճախ է լինում ձայնավորով սկսվող բառերի համար, իսկ բառավերջի *н-*ն հայերեն հոդն է, ապա բառի արմատն է *лр* կամ *ар*, որով կունենանք *лр-лрл-лрлн-нрлн*||*ար-արաւ-հարաւ*:

Կիև բառը երկու համանիշով է՝ *лрл* և *лрлн*. Բնադրի ձեռագրերում առաջինը նաև ես է ձևով է, իսկ երկրորդը՝ *лрлн*, *лрлн*, *лрлн* ձևերով: Մոնղոլերենում այս բառը *эв*, *эвэ* ձևերով է. այդպես էլ տառադարձել է Գ. Սանժեկը («կին» նշանակությամբ և նաև *эвэгтэй*, *хөёр*):

Ափշի. *лрлн*, *лрлн* հանգում են մեկ ձևի. *л-л-л* բաղաձայններից *л-*ի մոտավելի շատ կարող է լինել *л-*ն, մանավանդ, եթե դա թյուրքական *л* կամ *л* ածանցի նախաձայնն է. թե՛ Գ. Սանժեկը, և թե՛ Հ. Աճառյանը այս բառը չեն տառադարձել (մենք էլ այն չգտանք մոնղոլերենում, բայց թյուրքական լեզուներում⁴ առկա է *apa||ara* «մայր. քնոակին. տատիկ», իսկ *л* ածանց է): Ափշի գրչագրական սխալ է ու հանրաճանաչ:

Հայր բառի համար ձեռագրերում վերաբերում են *лрл*, *лрл*, *лрл*, *лрл*. սրանցից *лрл* բոլորովին սխալ է, որովհետև մոնղոլերենը վերջահար չեղտ չունի: Հայր բառի համար մոնղոլերենն ունի *эвэг*, նաև *аав* (թրք. *aba*, *apa*). որ Գ. Սանժեկը տառադարձում է *эвэгэ*, *эвэгэ*. սրա հետ նույնն է Հ. Աճառյանի՝ *evge*, որից երևում է, որ *лрл*, *лрл* ձևերում շ-ն առնմանական է՝ հայկական հոդի վրա ստեղծված. մոնղոլերենին *лрл*ի մոտ է *лрл*, բան *лрл* (չ՛ չի ներկայացնում *лр-лр*):

Մար բառը, ինչպես մարդ, կիև բառերը, համանիշներով է՝ *ар*, *лрл*, *лрл*. Գ. Սանժեկը տառադարձում է *ар-эка*, իսկ Հ. Աճառյանը՝ ոչ մեկը: Ժամանակակից մոնղոլերենում «մայր» բառի համար գտնում ենք

⁴ Հմմտ. Э. В. Севортян, Этимологический словарь тюркских языков, М., 1974, էջ 321—322:

⁵ Հմմտ. նույն տեղում, էջ 322:

⁶ Հմմտ. նույն տեղում, էջ 158—159:

ἄἰα-էէջ «մամա»: Թե ինչ լեզվով է մյուս համանիշ բառը և նրա երկու ձևերից որն է ճիշտ, դժվարանում ենք ասել:

Եղբայր՝ աղա. մոնղոլերենում aka-eka յո՛ւֆա՝ ավագ եղբայր, ինչպես բաղատրում է Գ. Սանժեկը. ժամանակակից լեզվում բառս ax ձևով է, դրա համար էլ Հ. Աճառյանը այս ձևի տակ հասկանում է երկու լեզվի բառ՝ axa-մոնղոլերեն, աչա թյուրքական⁷: Գանձակեցու «Պատմության» մեջ այս բառը գործածված է որպես պատվանուն (տե՛ս ստորև):

Քույր՝ աֆաշի, աֆանի. Գ. Սանժեկը տառադարձում է эгэчи, эгч և բաղատրում է «մեծ, ավագ քույր» (կրտսեր քույրը կամ եղբայրը дүү). այդպես գտնում ենք նաև ժամանակակից լեզվում. աֆաշի-эгэчи ձիշտ տառադարձությունն է և ըստ այդմ աֆանի ուղղելի է, մանավանդ որ մոնղոլերենը ու չունի:

Դու՛վա՝ քիոօն, քիւաւն, քիւաւն, քիւօն, քիւօնի, քիւոնի. սրանց մեջ և և աւ միևնույն հնչման հին և նոր գրավոր տարբերակներն են, ի և լւ ներկայացնում են մոնղոլական օ կամ օ հնչյունը՝ тэргүүн կամ толгой «գլուխ» (հմմտ. тэргүүн «գլխավոր՝ ղեկավար»): Կիրակոսի «Պատմության» քննական բնագրում բերված է. Սանժեկի տառադարձությունը աղավաղված է թվում, այնտեղ тэргүүн տպագրված է тэргүүн. մոնղոլերենը չունի օ տառ, այլ՝ օ, մոնղոլերենում у-ի թեթև տարբերակը ү է. այդպես և բառիս մյուս տարբերակում՝ туруун, որ ուղղելի է՝ түүгүүн ձևով. Հ. Աճառյանը նշել է քուօն գրչությունը⁸, որը նույնպես մոնղոլերենին հարազատ չէ:

Աչֆ՝ նիտուն, այլ ձեռագրերում՝ նիտոն, նիտոն, նետաւն. Գ. Սանժեկը տառադարձում է нидун, իսկ Հ. Աճառյանը՝ nidun, որից երևում է, որ ճիշտ է նիտուն (բառիս արմատն է нүд «աչք»):

Ականջ՝ չիֆին, նաև՝ ջիֆին, ջիֆ. մոնղոլերենը, ինչպես այդ երևում է նաև Գ. Սանժեկի տառադարձությունից, «ականջ» բառի համար ունի երկու ձև՝ чихэйн, чихк. հետևաբար հայերեն ջ պիտի սրբագրել չ-ով՝ чих-չիֆ:

Մորուֆ՝ սախալ. տառադարձված է ձիշտ՝ сахаал, ինչպես գտնում ենք ժամանակակից մոնղոլերենում, և ինչպես նշել է Գ. Սանժեկը. Հ. Աճառյանը այս բառը տառադարձում է saxal- մոնղոլերենի համար և saqal- թյուրքականի:

Նրես բառի դիմաց սկզբնաղբյուրի որոշ ձևազրկում դրված է մեկ բառ, ուրիշներում՝ երկու. յիւզ, յիօզ, յիոզ, յիւզ և որպես համանիշ՝ նիուր. այլ ձևազրկում դրանք բարդված են՝ յուզնիւր, յիւզնիւր: Սրանցից Գ. Սանժեկը տառադարձել է նիուր-ниур, որպես մոնղոլերեն բառ (արդի արտասանությամբ՝ нүүр), իսկ Հ. Աճառյանը տառադարձել է մյուսը՝ үнз, որ թյուրքական է: Ինչպես երևում է, ձիշտ են յիւզ և նիւր, իսկ մյուսները՝ յիօզ, յիոզ և նիուր մոտավորապես ձիշտ են. շինծու են բարդված ձևերը:

Ներան՝ աման. Գ. Սանժեկը տառադարձում է аман. ժամանակակից լեզվում գործ էածվում ам ձևով:

Ատամ համանիշներով է՝ սիուր, սիդուն, նաև՝ սիդուն-սիուր. որոշ ձևազրկում չկա սիդուն. Գ. Սանժեկը տառադարձում է шүд(эн), шидүн (ժամանակակից մոնղոլերենում արտասանվում է шүд): Ինչպես երևում է,

⁷ Հմմտ. նույն տեղում, էջ 70—71, 121—123:

⁸ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 259:

սխառ ուրիշ լեզվի բառ է, իսկ սիլուս-սխառ բարդությունը հանիրավի է. ճիշտ է սիլուս, որ պիտի սրբագրել շիլուս:

Հաց բառի դիմաց ձեռագրերում գտնում ենք օքմախ, օքմակ, օղմի, աքմախ, աքմակ, ալքմակ. սրանցից ալքմակ նույնն է ինչ օքմակ (Հմմտ. օլուխ բառի համապատասխան ձևերը), օղմի՛ ձևի մեջ շփոթված են ք-ղ: Գ. Սանժեկը տառադարձում է ОТМАК և նշում կալմիկերեն ОТМАК, որոնցից ոչ մեկն էլ մոնղոլերեն չէ (վերջինս ունի ТОЛХ «հաց»), իսկ Հ. Աճառյանը նկատի է ունենում թյուրքական լեզուները և տառադարձում է etmek, ekmek և չաղաթայերենը otmak⁹:

Եզ՝ օխար, այլ ձեռագրերում՝ ախար, ախար, օզար. սրանք բոլորն էլ մոտավորապես ճիշտ են, որովհետև, ինչպես երևում է նաև Գ. Սանժեկի տառադարձությունից ХКЭР, հանգում են մեկի (եզ բառի համար ժամանակակից մոնղոլերենը գործ է ածում шаар. օխար ներկայացնում է մոնղ. үхэр «կով». արդյո՞ք շփոթված չեն սրանք):

Կով՝ ունկն. այլ գրչագրում՝ լունկն. ճիշտ տառադարձությունն է մանջուրերենի համար՝ unen «կթան կով». մոնղոլերենի համար Գ. Սանժեկը տառադարձում է үннэ (ժամանակակից մոնղոլերենում՝ үнээ). Իսկ Հ. Աճառյանը՝ үнүйе, որով բառավերջի ն-ն հոգ կամ հաշվելում պիտի համարել:

Ոչխար՝ ղոյնա, որ և՛ ղոյնա, խոյնա, զնայնա. վերջինս բացարձակ սխալագրություն է, որ նկատվել է Հ. Աճառյանի և ուրիշների կողմից, իսկ մյուսները մոտավորապես ճիշտ են. Գ. Սանժեկը տառադարձում է коһһн, իսկ Աճառյանը՝ доуһн. նկատի առնելով թյուրքական լեզուները (ժամանակակից մոնղոլերենում хонһн, хонь «ոչխար» ձևերով է): Բառասկզբի ղ-ի կարող է բացատրվել հայ գրիչների՝ մայրենի բարբառների և թյուրքական լեզուների հնչման տարբերությամբ:

Գառ՝ ղուրղան, նաև ղուղան, որի մեջ ր-ն վրիպել է. Սանժեկը տառադարձում է хурган, хурга, որից երևում է, որ մոնղոլական х և г հնչյուններին համապատասխանում է հայերեն ղ:

Այծ՝ իման. տառադարձված է ճիշտ, һмаган, эмаа(һ) — ըստ Սանժեկի և vamaan — ըստ Աճառյանի (արդի մոնղոլերենում արտասանվում է ямаа):

Ջի՝ մօրի, նաև՝ մաւրի, որտեղ աւ նույնն է ինչ օ. ներկայացնում է մոնղոլերեն морн — Սանժեկի տառադարձությամբ, морин — ըստ Աճառյանի:

Ջարի՝ լօսա, որ և՛ լաւա, լաւաչ. վերջին երկու ձևերում աւ և օ նույն հնչումն են, ի-ն համր վանկափակն է հին ուղղագրության կանոնով: Ապա-բարցը մոնղոլերենի նոր այբուբենում չկա, տառային արժեք չունի, դժվարանում ենք բացատրել, թե ինչու Սանժեկը տառադարձում է .лyoca (այս բառը արտասանվում է .лyyc):

Ուղա՝ րաման, նաև՝ րամուն. ներկայացնում է մոնղ. тэмээн հնչումը:

Շուն՝ նօխայ, այլ ձեռագրերում՝ նախայ, նախա, նօխա, նաթղայ. սրանցից նօխայ-նախայ և նախա-նօխա համարժեք են՝ կաղմելով վերջնահանգ յ-ով և առանց դրան զուգաձևեր. նաթղայ սխալ գրչություն է՝ ք-ի պատճառով: Սանժեկը բառս տառադարձում է нокai, нохсн (առաջինը սխալով է, մոնղոլերեն այբուբենում չկա i, բառասկզբի н-ի տեղում էլ ապագրվել է ր. ճիշտ է

⁹ Հմմտ. Э. Севортян, նշվ. աշխ., էջ 254—257. Ինչպես երևում է, Կիրակոսի օրմախ հնագույն ձևն է, ավելի ճիշտ, քան етмек և այլն, որ նշված են թրք. աղբյուրներում:

երկրորդ ձևը, որ դործածական է նաև արդի լեզվում)։ Աճառյանը տառադարձում է մոտավորապես ճիշտ՝ noxai:

Իսլլ՝ չինա, նաև՝ չինալ, զինա. «Կիրակոսի զինա ձևը պետք է ուղղել չինա»,— նկատում է Հ. Աճառյանը¹⁰։ Ինչպես երևում է ժամանակակից մոնղոլերենի чоно ձևից և Սանժեկի чано, чана տառադարձությունից, ճիշտ է չինա, որ մոտավորապես ճիշտ տառադարձել է Աճառյանը՝ чино, сино:

Աբջ՝ ալտու, ալբու. մոնղոլերեն բառը՝ баавгай, շատ տարբեր է (Սանժեկը տառադարձում է утэчэ), Աճառյանը ենթադրում է թյուրքական агуу, агу «արջ»¹¹, որ հարմար է և հավանական:

Աղվես՝ հոնֆան, ալլ ձեռագրերում գտնում ենք՝ հաւնֆան. հոնֆան, հաւֆան. սրանք կաղմում են երկու տարբերակ՝ բառամիջի ն-ով հոնֆան–հաւնֆան–հոնֆան և առանց դրան՝ հոֆան–հաւֆան. Սանժեկը տառադարձում է унэгэн, унээ (սրանց մեջ у-ն զնացել է Ү-ի փոխարեն. արդի մոնղոլերենում ҮНЭГ ձևով է)։ Ձեռագրական տարբերակներից մոտավորապես ճիշտ է առաջինը, որի նախահոնն և-ն, ըստ երևույթին, հայացի հավելված է։

Նապաստակ բառի դիմաց գտնում ենք երկու համանիշ՝ րաբլալ, րապլալ, րափլալ, բարլալ և բուլալ, որ և՛ րաբլալ–բուլալ, բոբլալ–բուլալ, որոնք (վերջիններս) ձեռագրերի մի մասում չկան. Սանժեկը տառադարձում է таулай ~ тулай, բայց արդի մոնղոլերենում գտնում ենք միայն тулай. Աճառյանը տառադարձում է միայն тилау։ Թաբլալ–բապլալ–բափլալ շատ տարբեր չեն. գրիչների մտլրենի խոսվածքներում բ–պ–փ համարժեք են և հենց նրանցից էլ գալիս են. աղավաղ ձև է բաբլալ, որի մեջ բ–բ դրափոխվել են։

Հավ՝ րախեա, րախեալ համապատասխան տառադարձությունն է մոնղ. тахиа հնչման, որ Սանժեկը տառադարձում է тахия, такня. Աճառյանը ենթադրում է թյուրքական բառը և տառադարձում touuq, touux:

Աղալնի ամենաշատ գրչագրական տարբերակներով բառն է՝ ֆոֆուչին, կոկուչա, գոգաչա, գոգաչալ, գաւգաչա, գաւգաչալ, գոգաչեա, գոգաւչա, գոգաւչալ. սրանք հանգում են երեք դուգաձևի՝ 1. ֆոֆուչին, 2. գոգաւչա, 3. մյուս բոլորը, որոնց մեջ՝ աւ–օ և բառավերջի համը յ-ով։ Մոնղոլերենում աղալնին тагтаа-ն է, որ կապ չունի այստեղ, սա թյուրքական բառն է, որ Սանժեկը տառադարձում է көкегчин (միանգամից երկու սխալով՝ 1 փոխանակ ս և ր փոխանակ ք), իսկ Աճառյանը՝ gugercin:

Արծիվ՝ բուրֆուի–դուշ, դուշ բուրֆուի գրչությունների մեջ արտացոլվել են մոնղ. дүргэд «արծիվ» և թյուրքական դուշ «թռչուն». Սանժեկը տառադարձում է дүргэд, дүргуш:

Ջուր՝ ուսու, ուսուն, սուն. այս զուգաձևերը հանգում են ուսու(ն) և սու(ն) տարբերակների. Սանժեկը տառադարձում է усун, ус, իսկ Աճառյանը՝ usun, su:

Դինի՝ տաւասու, տաւասուն. Սանժեկը տառադարձում է дарасун, та-расун (վերջինիս նախաձայն m պետք է լինի т). ժամանակակից մոնղոլերենում дарс ձևով է, որից երևում է, որ բառը գրիչների ձեռքով դարձել է ածանցավոր կամ բարդ՝ դաւաս–ու, դաւաս–սու(ն)։

¹⁰ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 259:

¹¹ Նույն տեղում։ Հմմտ. Э. Севортян, նշվ. աշխ., էջ 112–113:

Մով բառի դիմաց գտնում ենք տանկրզ, տանդզ, տանդրզ, տանգրզ, այլ ձեռագրերում՝ նաուր-տանգրզ, տանգրզ-նաուուր կամ ուղղակի նաուուր: Ժամանակակից մոնղոլերենում գործածական են և нугр «լիճ» և тэнгис «ծով»։ Սանժեեր տառադարձում է на`гр. որպես մոնղ. բառ, իսկ тэнгис, որպես թյուրքական՝ մոնղոլերենում փոխառնված։ Աճառյանը տառադարձում է nuur, dengiz:

Գետ՝ մօրան-ուլանսու, ուլանսու մօրան, մի քանի ձեռագրերում չիք մօրան: Ինչպես երևում է, այստեղ էլ առկա են երկու համանիշներ, որոնցից մեկը՝ մօրան, մոնղոլերեն է мөрөн, որ Սանժեեր տառադարձում է мөрэн, իսկ Աճառյանը՝ muren. ուլանսու արդյո՞ք բարդ է՝ կաղմված մոնղ. ulan¹² «աստիճանաբար, ավելի» և թյուրքական su:

Թուր բառի դիմաց գտնում ենք իօլտու, խօլտու, խալտու, խօլու և, նույնիսկ, քօլու. վերջինս մենսկ է և հավանաբար սխալ. ի և խ տառերը ձեռագրերում կարող էին շփոթվել։ Սանժեեր տառադարձում է холту, лду (վերջինիս i սխալ է, պետք է լինի и), բայց մոնղոլերենում չկա այդ բառը:

Աղեղ՝ նմու, նըմու, նմօ ներկայացնում են արդի մոնղ. нум «աղեղ», որ Սանժեեր տառադարձում է нуму:

Նետ՝ սըմու, սմու. ժամանակակից մոնղոլերենում այս բառը сум, суман ձևերով է և նշանակում է «նետ. դասակ, էսկադրա»։ Սանժեեր տառադարձում է суму, իսկ Աճառյանը՝ sumun:

Թագավոր՝ մելիֆ, մելիֆ (մոնղոլերեն բառերի ցանկում կիրակոսը չափտի դներ այս ձևը, քանի որ նա գիտեր սրա մոնղ. համարժեք խաղան բառը, որ տե՛ս ստորև):

Պատուոն՝ նուփն. արդի մոնղոլերենում սա ноён—նույոն ձևով է և նշանակում է «պարոն»։ Աճառյանը տառադարձել է noyan:

Մեծ պատուոն՝ եֆա (նաև՝ եֆեալ) նուփն, էֆա-նուփն. վերջինս հանրապի բարդություն է (մոնղոլերենը չունի եֆա, էֆա բառ, ալլ՝ том). սա թյուրքական է, որ Աճառյանը տառադարձում է века:

Երկիր՝ էլ, իրկան, էլիրկան. սրանցից էլ թյուրքական է՝ el «երկիր. ցեղ, համայնք, ժողովուրդ»։ իրկան Սանժեեր տառադարձում է иргэн «ժողովուրդ» (արդի մոնղ. хуьүүс, утс, ард түмэн «ժողովուրդ, մարդիկ», ирмэг «երկիր»), որից երևում է, որ էլիրկան բարդություն է թյուրքական և մոնղոլական բառերի:

Երկինֆ բառի դիմաց ձեռագրերում գտնում ենք գօգայ, գաօգայ, գօֆայ, գուֆոյ, գոգ. որոնք ամփոփվում են երկու հիմնաձևի՝ գօգ, որ թյուրքական է՝ qöq, gög, ինչպես տառադարձում է Աճառյանը և köka, ինչպես տառադարձում է Սանժեեր (Երկինֆ բառի համար արդի մոնղ. ունի тэнгэр, хурмаст-հմմտ. աստված բառի տակ). ինչպես երևում է, գուֆոյ սխալ գրչագրություն է:

Արեգակ՝ նարան, նառան, նուրան. Սանժեեր տառադարձում է наран, որ արդի մոնղոլերենում արտասանվում է нар. նուրան սխալ գրչություն է: Լուսին՝ սարա. ժամանակակից մոնղոլերենում արտասանվում է сар. Սանժեեր տառադարձում է сар, саран:

Աստղ բառի դիմաց ձեռագրերում գտնում ենք հուտուտ, հուտուտ-սաղրա, հուտուտ-սարղա, սարղա-հուտուտ, սարղա, սաղրա, սարա. որոշ ձեռագրե-

12 Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 259: Հմմտ. Э. Севортян, նշվ. աշխ., էջ 591:

րում չիք հուտուտ. Սանժեկը կասկածելով տառադարձում է միայն հուտուտ—ҺаауҺ (°). արդի մոնղոլերենում գտնում ենք ОД, ТАВАН, ХҮМҮҮ. եթե ճիշտ է հուտուտ, ապա մոնղ. ОД կրկնված է ОД-ОД—ուտուտ և հ-ի հավելումով՝ հուտուտ:

Սաբա կամ սադբա, սաբդա նախորդ՝ լուսին նշանակող բառի գրչագրական տարբերակներ են և հանիրավի բարդված. սխալ են նաև դ-ով՝ սադբա, սաբդա ձևերը:

Լույս՝ օտուր, աւտուր, ատուր. մոնղոլերենում լույս արտահայտվում է ԴЭРЭЛ, ԴЭГЭЭ բառերով և, ինչպես հուշում է հաջորդ բառը, շփոթվել են լույս և օր՝ ցեբեկ բառերը. ճիշտ կլինեն դեկ օր կամ ցեբեկ, որի դիմաց կունենայինք ОДОР, որին համապատասխանում է օտուր: Սխալ է ատուր տարբերակը, որ գալիս է աւտուր մոտավորապես ճիշտ ձևից. Սանժեկը տառադարձում է едур, որ ուղղելի է՝ ӨДҮР:

Դիշեր՝ սոյնի. տառադարձված է մոտավորապես ճիշտ. արդի մոնղոլերենում հնչվում է ШӨНӨ, որից սլարվում է, որ Ш խուլ շփակաձև փոխարինվել է համապատասխան ս-ով:

Դուազիր՝ բիրիֆչի. ժամանակակից մոնղոլերենում գործածվում է ӨН-ЧЭЭЧ «գրագիր, քարտուղար», որը հեռավոր կնրպով հիշեցնում է Գիրականի տառադարձությունը. թյուրքական լիզուններում կա bitigci, bitigäči «գրագիր». ինչպես երևում է, բառս թյուրքական ձևերին ավելի հարազատ է:

Սատանա բառի դիմաց գտնում ենք ամենից շատ և ամենից աղավաղ բառաձևերը՝ բառահուր, բառահուր, բառահուտե, բառահուտե լէպ, բառահուտ էլէպ, բա էլէպահուտ, էլէպ. ինչպես Սանժեկը, այնպես էլ Աճառյանը այս բառը չեն տառադարձել: Սատանա բառի համար մոնղոլերենը ունի երկու համանիշ ձև՝ ЗОНИГ, ЧӨТГӨР, որոնք որևէ չափով չեն հիշեցնում էլէպ կամ բառահուտ գրչությունները. մնում է մտածել, որ այս բառը անցել է տաբուի շարքը:

Այս բոլոր բառերը, ըստ ծագման աղբյուրի, Հ. Աճառյանը բաժանել է չորս ենթախմբի¹³.

1. Մոնղոլական՝ էչֆա՝ հայր, նիտուն՝ աչք, իման՝ այծ, մօրի՝ ձի. նօխա՝ շուն, նուին՝ պատրոն՝ պարոն, չինա՝ գայլ, թուլա՝ նապաստակ, մօրան՝ դետ, սմու՝ նետ:

Սրանց շարքում նա դնում է նաև ունէն՝ կով և նշում, թե «ավելի հարմար է մանջուրերեն նոեն «կթան կով», սակայն ձևի համար ավելի ճշգրիտ է թյուրքական ннен||inen «էգ. էգ ուղտ. կով»:

2. Թյուրք-թաթարական՝ օքմաֆ՝ հաց, դոյնա՝ ոչխար, ալբու՝ արջ, զօգարչա||fofoլիին՝ աղավնի, տանկզ||տանդզ՝ ծով, եֆա՝ մեծ, զօգ՝ երկինք, բիրիֆչի՝ գրագիր. այդպես և՛ թախեա՝ հավ, որը, սակայն, շատ անհարմար է թրք. тоууқ, тоуух ձևերի համար, բայց որը ճշտությամբ ներկայացնում է մոնղ. тахня, тахня «հավ», սու(ն)||ուսու(ն) «ջուր», որոնցից սու(ն) իսկապես թյուրքական է, իսկ усуу(у)՝ մոնղոլական:

Այս շարքի քսնգրի՝ աստված բառի քնգրի—тнгри, Բէնկրի—т'енри ձևերը մոնղոլական են, իսկ քանդրի—танри թյուրքական. «ոչխար» բառի դոյնա—qoyun թյուրքական և իոյնա—хонин монголական հնչման մոտավորապես ճիշտ տառադարձումներն են, ուստի պետք է դրվեն հաջորդ ենթախմբում:

¹³ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 259:

Այս շարքում գրված յուզնիուր՝ երես, բարդ բառ է, որի առաջին բաղադրիչը ներկայացնում է թյուրքական üz, yüz «երես», իսկ նիուր անորոշ է. «ծով» բառի համար գործածվում է թե՛ տանգզ, տանղզ թյուրքական պարզ բառը և թե՛ նաուր տանգզ բարդությունը, որի նաուր բաղադրիչը դրսևում ենք նաև տ-ի հավելմամբ՝ նաուուր, իսկ դա ներկայացնում է մոնղ. нугур «լիճ» և թրք. нугур «լիճ» ձևերը միաժամանակ: Այդպես է նաև եֆա նուին՝ մեծ պարոն, բարդությունը, որի առաջին բաղադրիչը թյուրքական է, իսկ երկրորդը՝ մոնղոլական:

3. Խառն՝ մոնղոլական և թյուրք-թաթարական՝ աղա՝ եղբայր—մոնղ. аха, թրք. аға, սախալ՝ մորուր—մոնղ. saxal, թրք. sagai. ուսուն, սուն՝ ջուր—մոնղ. усун, թրք. su:

4. Անորոշ՝ էր(է)՝ մարդ, էմէ ավչի՝ կին, աֆա՝ մայր, աֆաշի՝ քույր, բիրոն՝ գլուխ, չիֆին՝ ականջ, աման՝ բերան, սիդուն-սխուր՝ ատամ, օֆար՝ եղ, դուրդան՝ գառ, լոսա՝ ջորի, քաման՝ ուղտ, հոնֆան՝ աղվես, բուրֆուի-դուշ՝ արծիվ, տաւասուն՝ գինի, խօլտու՝ թուր, նմու՝ աղեղ, էլիբկան՝ երկիր, նաւան՝ արեգակ, սաւա՝ լուսին, հուտուտ-սաւղա՝ աստղ, օտուր՝ լույս, սոլնի՝ գիշեր, բառաֆուտ էլէպ՝ սատանա, բօբլա (-թուլա՝ նապաստակ):

Այս վերջին ենթախմբի բառերից բիրոն՝ գլուխ, սիդուն՝ ատամ, քաման՝ ուղտ, հոնֆան՝ աղվես, նաւան՝ արեգակ, օտուր՝ լույս նույնպես մոնղոլերեն են (տե՛ս էջ 137): Այդպես և էմէ՝ կին, աֆա՝ մայր, աֆաշի՝ քույր, չիֆին||չիֆ՝ ականջ, աման՝ բերան, օֆար՝ եղ (ҮХЭР—կռվ), դուրդան՝ գառ, լոսա՝ ջորի, տաւասուն՝ գինի, նմու՝ աղեղ, սաւա՝ լուսին, սոլնի՝ գիշեր:

Թյուրքական է ավշի—апа- чн/апа-сн «մայր. բեռակին. տատիկ»:

Խառն՝ մոնղոլական և թյուրքական են՝ էր՝ մարդ—մոնղ. эр, эрэ, թրք. әр, әг, բուրֆուի-դուշ||դուշ բուրֆուի՝ արծիվ—մոնղ. бургэд, бургэд «արծիվ», թրք. гыш, кыш «թռչուն», էլիբկան՝ երկիր—թրք. el «երկիր, ցեղ, համայնք, ժողովուրդ», մոնղ. нргэһ «ժողովուրդ»:

Չնայած մեր գործադրած ջանքերին՝ չկարողացանք որոշել հետևյալ ինը բառերի ծագումը. սխուր, որ գործածված է և՛ առանձին, և՛ բարդության մեջ՝ սիդուն-սխուր, իբրև մոնղ. սիդուն՝ ատամ բառի համանիշ, բաբլա նույնպես գործածված է առանձին և բարդության մեջ՝ բաբլա-բուլա, որպես մոնղ. բուլա՝ նապաստակ բառի համանիշ. այդպես և ուլանսու (մօրան-ուլանսու, ուլանսու-մօրան), որպես մոնղ. մօրան՝ գետ բառի համանիշ. աիֆչա, որպես մոնղ. աֆա՝ մայր բառի համանիշ, նիուր, որպես լուզ՝ երես թրք. բառի համանիշ, խօլ(տ)ու՝ թուր և հուտուտ, որպես մոնղ. սաւա՝ լուսին բառի համանիշ, բառաֆուտ էլէպ՝ սատանա, որ գործածված է մի ամբողջ շարք աղավաղ ձևերով՝ առանձին-առանձին և բարդված:

Հաշվելով նաև համանիշ բառերը՝ Կիրակոսի «Պատմության» մոնղոլերեն բառերի ցանկում գտնում ենք 64 բառ, որից 35-ը՝ մոնղոլերեն, 15-ը՝ թյուրքական, խառն՝ 5, անորոշ՝ 9:

Ինչ մնում է բառերի տառադարձությանը, ապա ավելի կոնկրետ լինելու համար մենք համեմատեցինք ակադ. Բ. Յա. Վլադիմիրցովի հիշյալ գրքում բերված 9-րդ տախտակի տվյալները Կիրակոսի բառագրառումների հետ և ստացանք զուգահեյությունների հետևյալ պատկերը.

Կիրակոսի մոտ	Հին. մոնղ. հնչումը	Խալխա բարբառային հնչումը	
աղա	axa	axa	«եղբայր»
բիթիթ(չի)	bičig	би'ч'ик	«նամակ»
թաման	temegen	t'emēren	«ուլտ»
թանգրի (թանդրի, թէնկրի, թնգրի)	tingri	t'engri	«երկինք»
թիրոն	terigun	t'ypū, terigūn	«զուխ»
իման	imaγan	jamak,an	«այծ»
խաղան	xaγan	xak,an	«արքա»
ճօնքան	ūnege	ynēgē, ynug-ynik	«աղվես»
նարան	naran	napan	«արեգակ»
նաուր	naγur, nakyr	nur, нор	«լիճ»
նուին	noyan	nojōn, nojjō	«պարոն»
չինա	cinu-a, cinw-a	ч'онд	«գայլ»
սիդուն	sudūn	шудун, шуд	«ատամ»
օտուր	egγr, edur	odūr, ydūr, ydlyr	«օր, լույս»

Ինչպես երևում է, Կիրակոսի տառադարձությունը ավելի մոտ է Խալխա բարբառային հնչմանը, որի կողմն էր, ըստ երևույթին, Ղութուն-նուինը, որը «յաուր միում յուսուցանել նորա (Գրիգոր իշխանին—Ռ. Բ.) մանկագոյնսն», որից «իւր իսկ լուեալ էր» Գրիգոր իշխանը (էջ 272—273):

Ընդհանրապես խոսելով՝ կարող ենք ասել, որ թյուրքական բառերը Կիրակոսը տառադարձել է ավելի ճիշտ, քան մոնղոլերեն բառերը. ավելին՝ մոնղոլերեն բառերի ղգալի մասը տառադարձված է մոտավորապես ճիշտ, իսկ որոշ մասն էլ սխալներով է կամ աղավաղված իր կամ գրիչների կողմից:

Հենց այս պարագան էլ ապացույց է այն բանի, որ Կիրակոսը կամ նրա «Պատմութեան» ընդօրինակողները մոնղոլերեն չգիտեին. Գրիգոր իշխանը, որ մեր համոզմամբ մոնղոլերեն բառերը Կիրակոսին թելադրողն էր (սե՛ս սույնի վերջում), մոնղոլերեն սովորել էր, Մ. Աբեղյանի բառերով ասած՝ «շատ թե քիչ»:

Կիրակոսի «Պատմութեան» մեջ գտնում ենք մի շարք մոնղոլական և թյուրքական բառեր էլ, որոնք քաղաքացիություն էին ստացել հայոց մեջ. դրանք վերաբերում են սլետական-վարչական, հարկադրման-հարկահանութեան բնագավառներին. այսպես.

Խաղան. «հայր անուանեալ էր արքային նոցա, զոր խաղանն կոչէին» (էջ 276), «հհաս հրաման ի խաղանէն առ զօրսն իւր, զի մի ոք իշխեսցէ շար ինչ անել Աւագին, և թուղթ՝ առ Աւագն, և պարգևս նմա» (266):

Այս բառը գործ են ածել նաև Մխիթար Այրիվանեցին և ուրիշներ խաֆան ձևով, որ Արմատական բառարանում բացատրված է «թագավոր, սուլթան». ծագումով թյուրքական է՝ xaqān, որից փոխառյալ են արաբերենը՝ xāqān, միջին լատիներենը՝ caganus, ռուսերենը և այլն:

Հ. Աճառյանի ասելով՝ բառս հայերենին է անցել պարսկերենի միջնորդությամբ (պահլավերեն xakan, պարսկերեն՝ xāqan). Արմատական բառարանը չունի խաղան տարբերակը և, ինչպես երևում է, այս բառը հայերենին է անցել երկու անգամ, նախ՝ պարսկերենի միջնորդությամբ՝ խաֆան, ապա անմիջապես՝ խաղան, որ մոնղոլերեն հնչման հարազատ է:

Ղան. «առաքեցին զԱւագն առ արքայն իւրեանց, զոր զանն կոչէին»

(էջ 262), «առաւ գերի և առաքեցաւ առ զանն» (էջ 292), «որում անուն էր Բաթու, մօտաւոր ազգական զանին» (էջ 315), «յաշխարհին հեռաւոր հիւսիսոյ յարեւելից, զոր կոչեն ի խժական լեզուն Ղարաղորում... անուն էր Չանգզ զան» (այլ ձեռագրերում՝ Չանգզղան, չանգզ խան, չանկզխան (էջ 231—232):

Արմատական բառարանում խան բացատրված է «իշխան» և հղված զան Բաթին «իշխան, մանավանդ թաթարների թագավորը կամ իշխանը»: Այստեղ տվյալ բառի նախավոր գործածության համար որպէս սկզբնաղբյուր հիշվում են Կ. Երզնկացին, Մ. Այրիվանեցին, բայց չի նշվում Կ. Գանձակեցին՝ Ղան հին հնչումն է, իսկ խան՝ նոր:

Նուրն. «զայս պատասխանի ետ գլխաւորն նոցա Բաշու-նուին» (էջ 281), «առեալ էր նորա զգոստոր ուրումն մեծի՝ Ղութուն-նուին կոչեցելոյ կին որդոյ իւրոյ. և զգոստոր իւր տունալ էր կին միւս աւագագունի՝ Ուսուռ-նուին կոչեցելոյ» (էջ 291):

Այլ գրչագրերում այս բառը գրված է նաև առանձին՝ Ղութուն նուին, զութուն նուին, ուսուր նուին, ուսուռ նուին, ուսուս նուին և այլն: Կիսանջատ և անջատ գրություններից երևում է, որ այս բառը անկախ գործածություն չունի և, թերևս, այդ է պատճառը, որ Արմատական և փոխառությունների բառարաններում որպէս ինքնուրույն բառաթեմա չի գրվել: Ինչպես վերը տեսանք (պատրոն բառի տակ), ժամանակակից մոնղոլերենում այս բառն արտասանվում է *HOEH*—նոյն «ֆեոդալական սինյոր, պարոն»,—բացատրված և գրի է առնված ճիշտ:

Ղուրչի. «Գայր հասանէր հրովարտակ ի խաղանէն առ զօրս և զօրաւոխս, որ... զօրաւար և առաջնորդ կացուցանել փոխանակ Չարմաղանին, որ համրացեալ էր, զոմն մի ի զօրացն՝ Բաշու զուրչի (այլ ձեռագրերում՝ Բաշու Խուրչի)» (էջ 278—279):

Նախորդ բառի պէս սա էլ ինքնանկախ գործածություն չունի, հանդես է գալիս որպէս հատուկ անվան ետադաս լրացում՝ տիտղոս. սա նույնպէս տեղ չի գտել Արմատական և այլ բառարաններում:

Ժամանակակից մոնղոլերենում գտնում ենք *XVYRCHH* «հանգուցյալներին գերեզմանոց փոխադրող անձ՝ մարդ», որ, ըստ երևույթին, մոնղոլական համբարակային ղինծառայության տիտղոս էր:

Կիրակոսի «Պատմության» մեջ գործածված օտար բառերի մյուս մասը, չնայած ծագումով թյուրքական, բայց *XIII* դարում արդեն մոնղոլ-թաթարների կողմից որդեգրված, Մերձավոր Արևելքի միջազգային բառարանի բառեր են:

Խաբուն. «կինն Հուլաուին՝ աւսգ խաթունն, որում անուն էր Տօղուզ խաթուն (այլ ձեռագրերում՝ խաթոն)» (էջ 382), «ծանոյց ելթինայ խաթունին՝ կնոջ Չարմաղունին, որ վարէր զիշխանութիւնն նորա յետ համրանալոյն» (էջ 290):

Ժամանակակից մոնղոլերենում այս բառը *ХАТАН* «տիկին, տիրուհի» ձևով է. Արմատական բառարանում բացատրված է «տիկին կամ թագուհին խաղարների» և նշված, որ ծագումով շատ ավելի հին է, քան թաթար-մոնղոլների հարաբերությունը հայերի հետ: Ծագումով սա սոգդայիներն է, որից անցել է թյուրքական լեզուներին, ապա՝ պարսկերենին և այլն¹⁴:

¹⁴ Տե՛ս Հ. Աճառյան, Արմատական բառարան, Խաբուն բառարմատի տակ:

Արաբակ. «Բւանէ (էր) աթաբակութեան (այլ ձեռագրերում՝ աթապակութեան, աթապեկութեան) պատուով» (էջ 168)։

Արմատական բառարանում այս բառի նախնական գործածությունը դրվում է XV դարից (մեր բերած վկայության պահանջով պետք է դնել XIII դարից) և տրվում է նրա գրչությունները՝ արապակ, արաբեկ, արաբէկ, արաբակուրյուն կազմված է արաբակ հիմնածեղի վրայից, որ չկա «Հին թյուրքերեն բառարանում», բայց ծագումով թյուրքական բառ է և նշանակում է «թագավորահայր. մեծ հայր. կառավարիչ. սուլթանի որդիների ուսուցիչ. փոխարքա»։ կազմված է աթա—արա «հայր» բալկ կամ բեկ արմատներով, որոնք գործածված են քստնում նաև Կիրակոսի «Պատմության» մեջ։

Արա. Սիմէօն «ասորի ազգաւ... զոր Ռաբան-աթա (այլ ձեռագրերում՝ Ռպան Աթա, Ռաբան աթա, Ռասպսին) կոչէին. Ռաբան ասորերէն՝ վարդապետ՝ աթայն թաթարերէն՝ հայր» (էջ 276)։ Այս բառը առանձին չի գործածված, այլ որպես անունների ետադաս որոշիչ, ուստի մեր բառարանների մեջ չի մտել։

Բալկ կամ բեկ Կիրակոսը առանձին կամ անկախ չի գործածել, հետագայ դարերում միայն պիտի անցներ մեզ որպես պատվանուն կամ վարչական տիտղոս։

Աղա. «որում անուն էր Թօրա աղա (այլ ձեռագրերում՝ Թաւրա աղա, Թաւր աղա, Թուրա աղա, Թօր աղայ, Թուրաղանայ)» (էջ 362), «Եւ առաքեցին զնա (Աւագին—Ռ. Բ.) և զոմն մի զլիսաւոր՝ Տօնդուս-աղա (այլ ձեռագրերում՝ տանդուս աղա, տոնդուզ աղա, տունդուս աղա, տօնդուզ աղա) անուն, որ եկեալ էր հարկս պահանջել յամենեցունց հրամանաւ դանին» (էջ 266), «Իսկ նա յանձնեաց զնա զպաշտօնեայս իւր յեղբայրս իւր ի Սադեղ-աղայն (այլ ձեռագրերում՝ սատիս աղայն, Սադեղաղայն)» (էջ 291)։

Սա էլ նախորդների նման ինքնանկախ չի գործածվել, դրա համար էլ բառարաններում տեղ չի գտել։ «Հին թյուրքերեն բառարանում» բառս երկու ձևով է՝ աղա, աղա, որ նշանակում է «ավագ եղբայր», այնինչ Կիրակոսի «Պատմության» մեջ գործածված է որպես պատվանուն։

Տամղա. «Եւ մարդիկ նորա վաճառականք, որք ունէին զտամղա (այլ ձեռագրերում՝ զտամղայ, զտաղմա) նորա, այսինքն՝ զնշան և գիր» (էջ 277)։

Արմատական բառարանում այս բառը բացատրված է «զրոշմ, նշանազրոշմ», իսկ «Հին թյուրքերեն բառարանում» tamğa «կնիք, զրոշմ, նշանազրոշմ, խարանազրոշմ. նշան (մոզական)»։ Տամղա ձևին զուգահեռ է տաղմա, թյուրքական լեզուներում՝ tamğa, damğa, ծագում է պարսկերեն day «խաբան» բառարմատից՝ թյուրքական ma ածանցով։

Այս տամղա բառը գտնում ենք նաև բարդ ու ածանցավոր ձևերում.

Էլ-տամղայ. «Ետուն նմա պարզես և էլ-տամղայս (այլ ձեռագրերում՝ էլ տամայս, եաուլիս), զի մի որ նեղեսցէ զնա» (էջ 291). «Ետուն և գիր ըստ դենին իւրեանց, զոր էլ-տամղայն (այլ ձեռագրերում՝ եղամղայն, էլտամղան) կոչէին» (էջ 285)։

Արմատական բառարանում այս բառը դիտվել է որպես բարդ՝ el-tamğa «ձեռնագրոշմ», որ չունի «Հին թյուրքերեն բառարանը»։

Տամղանի բառը չի գործածել Կիրակոսը, բայց գործածված է 1263 թ. մի արձանագրության մեջ. «Միք տամղաճիբս... բարձանք ի յԱնոյ իրիցանուս դբամն», «Անոյ տամղաճի էի», «Անոյ տամղաչի»։ Արմատական բառարա-

նում Հ. Աճառյանը այս բառը բացատրում է «խարան խփող պետական պաշտոնյա», իսկ «Հին թյուրքերեն բառարանում» գտնում ենք tamɣaci, որ նշանակում է «կնքապահ»:

Խափշուր. «Այլ և միւս ընդ այլ բազումսն, որ եղաւ (հարկ) յԱրդունէն՝ մալի և խափշուրի (այլ ձեռագրերում՝ փախշուր)» (էջ 374): Արմատական բառարանում այս բառի ուղիղ ձևն է համարվում ղփշուր կամ խուփշուր, որ տառագրաված են թաթարական qubɣur, մոնղոլերին qobɣur, qurɣur «անասնահարկ» բառերից. «Հին թյուրքերեն բառարանում» տրված է qubɣır «համընդհանուր հարկ՝ պետության օգտին»:

Թաղար. «եղաւ հրաման ի Հուլաուէն պահանջման հարկի, զոր թաղարն (այլ ձեռագրերում՝ թուրղարն, թուրղան) ասեն» (էջ 374): Միջնադարյան ուրիշ գրավոր աղբյուրներում գործածված են նաև եզին թաղար, կալի թաղար կամ կալաթաղար, որոնք բոլորը, ինչպես Կիրակոսն է բացատրում, նշանակում են «հարկ, տուրք». այս նշանակությամբ բառս առաջինը գործածել է Կ. Դանձակեցին¹⁵:

Տուպրակ. «Այլ և միւս ընդ այլ բազումսն, որ եղաւ յԱրդունէն՝ մալի և խափշուրի, եղաւ հրաման ի Հուլաուէն պահանջման հարկի, զոր թաղարն ասեն, յամենայն զլիւոյ, որ մտեալ էր ի գիր արքունի, պահանջէին հարիւր լիտր ցորենան, յիսուն լիտր գինի, երկու լիտր բրինձ, և ծնծատ, երեք տոպրակ, երկու շուան, մի սպիտակ, մի նետ, մի նալ՝ թող զայլ կաշառսն, և ի քսան անասնոյն՝ մի անասուն և քսան սպիտակ և ոյր ոչ գոյր՝ զուստերս և զստերս առնուին ընդ պահանջման» (էջ 374—375):

Այս բառը միջնադարյան որոշ հեղինակներ գործ են ածել նաև օխատոպրակ բարդության մեջ. ծագումով սա թյուրքական բառ է, որ հայտնի է tubrak, dorba, torba ձևերով և նշանակում է «պարկ, տոպրակ»:

Յուրդ. «տեսին զՄանգու դանն... կացեալ յուրդոյն (այլ ձեռագրերում՝ յուրդույն, յորդոյն, յորդույն, յորտոյն, յորդուն) աւուրն յիսուն» (էջ 367): Այս բառը շունեն Արմատական և «Թուրքերեն փոխառյալ բառեր հայերենի մեջ» բառարանները. «Հին թյուրքերեն բառարանում» jurt բացատրված է «տուն, բնակատեղի. հող, երկիր. ավերակ»:

Դուն թյուրքական բառերից բացի, Կիրակոսը գործ է ածել նաև Արևելքի միջազգային բառարանի այլևայլ բառեր, որոնց մի մասը պարսկերեն է. մյուս մասը՝ արաբերեն:

Դուման. «Եւ կայ այլ ևս երեսուն և հինգ դուման ամս, որ է մին դումանն (այլ ձեռագրերում՝ թուման) տաս հազար» (էջ 371—372): Դուման ձևով այս բառը գործ են ածել միջնադարյան ուրիշ հեղինակներ էլ. «Մի դուման մի բիր» (Օրբելյան), «Դուման մի հեծելով և մի դումանն էր ժՌ» (Մաղաքիա Ար.). ավելի ճիշտ է թուման, որ գտնում ենք նաև Թլկուրանցու մոտ. «Մին դթումանն հալածէր»:

Ըստ Արմատական բառարանի՝ սա թաթարական tūmen «տասը հազար» բառն է, որ անցել է նաև պարսկերենին, ծագում է թոխարական tmaṃ, քուչերեն tūmane, tmāne «տասը հազար. հազարավոր, շատ-շատ» ձևից առաջացած՝ tumān > tūmān:

¹⁵ Հմմտ. Հ. Աճառյան, Արմատական բառարան, Թաղար բառի տակ:

Մելիք. «Եւ թագաւորն, որ նստէր ի նմա, ոչ կոչէին սուլտան, կամ մեղիք... այլ խալֆայ անուանէին, այսինքն՝ յետնամէնաց ի Մահմետէ» (էջ 378)։ այս բառը գործ են ածել նաև Ուսայեցիին և Համբարձումեանին։ Արմատական բառարանում բացատրված է «իշխան, որ ծագում է ընդհանուր սեմական mlk «իշխել, տիրել» արմատից. արաբերեն malīk անցել է յուրքական լեզուներին, ստացել մելիք հնչումը և անցել հայերենին. «Հին թյուրքերեն բառարանում» բառս երկու ձևով է. melik, malik:

Ղալա. «գնացին յայս ղալան (այլ ձեռագրերում՝ ղալայն)» (էջ 377)։ Այս բառը չունի Արմատական բառարանը, իսկ «Խուրքերենի փոխառյալ բառեր հայերենի մեջ» բացատրված է «բերդ, ամրոց», որ ծագում է արաբերեն kala բառից, որը հայերենին է անցել թյուրքական լեզուների միջնորդությամբ (հմտ. «Հին թյուրքերեն բառարանում» qala «բերդ, ամրոց, միջնաբերդ. բաղաբ»):

Մալ. «Եւ բազում տառապանս հասուցանէին ամենայն աշխարհաց հարկապահանջութեամբ և յափշտակութեամբ... եղաւ [հարկ] յԱրղունէն՝ մալի և խափշուրի» (էջ 374)։

Արմատական բառարանում այս բառը բացատրված է «մի տեսակ հարկ կամ տուրք». սա ծագում է թաթարական mal «արջառի վրա դրված հարկ՝ յուրաքանչյուր քսան ընտանի անասունից մեկը առնվում էր» բառից, իսկ սա էլ՝ արաբերեն mal բառից («Հին թյուրքերեն բառարանում» mal «ունեցվածք. ապրանք» նույնպես դրվում է արաբերենից)։

Նալ. «պահանջէին... մի նետ, մի նալ...» (էջ 375), նշանակում է «պայտ». Արմատական բառարանը դնում է արաբերեն na՛l բառից, որ անցել է հայերենին թյուրքական nal հնչմամբ (չունի «Հին թյուրքերեն բառարանը», մոնղոլերենում էլ գտնում ենք тах «պայտ», որ կապ չունի այստեղ)։

Ինչպես վերը նշվեց, Կիրակոսի մոնղոլերեն բառացանկը հետաքրքրել է նաև բանասեր-աղբյուրագետներին. դատելով այդ բառացանկից՝ նրանք կարծում են, թե Կ. Գանձակեցին տիրապետել է մոնղոլերենին և բառերը գրի է առել իր գերության ամիսներին¹⁶, սակայն պատմագրի տողերից երևում է, որ նա մոնղոլերեն չգիտեր, այդ լեզվի բառերն էլ գրի է առել Կիլիկիայի իշխան Գրիգոր Մամիկոնյանի թելադրությամբ. ահա հեղինակի տողերը. զորապետ Մուլար-նուինն ու նրա գործերի կառավարիչ Չուչու խանը «կոչեցին դմեզ ի դուռն իշխանին... հանդերձ թարգմանաւ և ասէ» (էջ 251). «Վասն զի յօժարեցաք մեք յիշատակ թողուլ յազգս՝ որ գալոց են... սակաւիկ մի ցուցցուր քննասիրաց զկերպարանս և շխօսս նոցա», որ «պատմեաց մեզ Գրիգոր իշխան... զոր իւր իսկ լուեալ էր ի մեծ առնէ միոջէ ի կաբի աւագացն, որում անուն էր Ղուլուն-նուին, յաւուր միում յուսուցանել նորա մանկագոյնսն» (էջ 272—273)։

¹⁶ Հ. Ոսկյան, Հովհաննես Վանական և յուր զարոցը, Վիեննա, 1922, էջ 92; Ս. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Բ, Երևան, 1946, էջ 196: Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրություն Կ. Մելիք-Օհանյանի, Երևան, 1961, սերածականը։

СПИСОК МОНГОЛЬСКИХ СЛОВ У КИРАКОСА ГАНДЗАКЕЦИ

Доктор. филол. наук Р. А. БАГРАМЯН

(Резюме)

Армянский историограф XIII в. Киракос Гандзакеци приводит в своей «Истории» несколько десятков монгольских слов, услышанных им от князя Григора Мамиконяна Киликийского. На основе сравнения списков «Истории» в статье уточняются значения этих слов и выделяются четыре их группы: монгольские — 35, тюркские — 15, общеалтайские — 5, неотожествленные — 9 слов. Дополнительно приводятся еще 20 слов, заимствованных Киракосом из «Восточного словаря» того времени, которые были распространены в армянской разговорной речи и деловой письменности.